

## Թեստ

### 1. Հստ «Սասնա ծռեր» էպոսի համահավաք բնագրի՝ ի՞նչ պայման են կապում Մեծ Միերը և Մըսրա Մելիքը:

ա. Ով հաղթի մենամարտում, նա դառնա և՛ Սասունի, և՛ Մըսրա թագավոր:

բ. Ով շուտ մեռնի, նրա ընտանիքին տիրություն անի մյուսը:

գ. Ով կարողանա հաղթել Սպիտակ Դևին, մյուսը նրան հարկ վճարի:

դ. Ում տերությանը վտանգ սպառնա, մյուսը նրան օգնության հասնի:

### 2. Էպոսում ինչպե՞ս է ավարտվում Դավթի ու Մելիքի մենամարտը:

ա. Դավիթը թուր Կեծակիով մեջտեղից երկու կես է անում Մելիքին:

բ. Դավիթը կոտորում է Մելիքի բանակը, և Մելիքը սարսափահար փախչում է:

գ. Դավիթը իր զարկերը բաշխում է Մելիքի մորն ու բրոջը, և մենամարտ տեղի չի ունենում:

### 3. Էպոսում ո՞ր հերոսն է ծնվում ձեռքի ավում մի կաթիլ արյուն սեղմած:

1. Բաղդասարը      2. Մեծ Միերը      3. Դավիթը      4. Փոքր Միերը

### 4. Պնդումներից ո՞րն է սխալ Դավթի վերաբերյալ:

1. Սպանում է Սպիտակ Դևին և առյուծին երկու կես անում:  
2. Վերաշինում է Մարութա վանքը և պատժում է Մելիքի հարկահաններին:  
3. Կռվում է Խանդութի հոր թշնամիների դեմ և ոչնչացնում նրանց:  
4. Սպանում է Մըսրա Մելիքին և նրա պարտված զորքը ազատ արձակում:

### 5. Էպոսի ո՞ր հերոսուհին է , որ Զուռկիկ Ջալալին հեծած, մի քանի տարի քաջաբար հսկում ու կառավարում է երկիրը:

1. Ծովինարը      2. Դեղձուն-Ծամը      3. Խանդութը

### 6. Էպոսի նշված հերոսներից ո՞րը ում կինն է:

1. Դեղձուն-Ծամ      ա. Սասունցի Դավիթ      2. Արմաղան      բ. Փոքր Միեր

3. Խանդութ      գ. Մեծ Միեր      4. Գոհար      դ. Սանասար

1-գ, 2-բ, 3-դ, 4-ա

1-դ, 2-գ, 3-ա, 4-բ

1-դ, 2-ա, 3-գ, 4-բ

### 7. Բաղդադում ու՞մ գերեզմանին է այցելում Փոքր Միերը Էպոսում:

1. Գագիկ թագավորի      2. Բաղդասարի      3. Զեռի Թորոսի      4. Ձենով Օհանի

